# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

## N ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ԲԵՆԶԻՆ/2023/Հ-7-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան

<<09>> <<03>> 2023թ.

ՀՀ ոստիկանությունը, ի դեմս ՀՀ ՆԳՆ ոստիկանության պետ-ներքին գործերի նախարարի տեղակալ, ոստիկանության գեներալ-մայոր Ա. Հովհաննիսյանի, որը գործում է ոստիկանության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և **ՄԵԳԱ ԹՐԵՅԴ ՍՊԸ**, ի դեմս տնօրեն Սուրեն Բաղդասարյանի (այսուհետ՝ Վաճառող), հիմք ընդունելով **23.12.2022թ**.-ին կնքված **ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ԲԵՆԶԻՆ/2023/Հ-7-1** ծածկագրով գնման Պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր / 8.5 և 8.15 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը /այսուհետև՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին.

### 1.Համաձայնագրի առարկան, գինը, վճարման կարգը և գործողության ժամկետը

1.1 Սույն Համաձայնագրով Կողմերը համաձայնության եկան և հաստատեցին **ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ԲԵՆԶԻՆ/2023/Հ-7-1** ծածկագրով գնման պայմանագրի 1-ին չափաբաժով բենզին <<Պրեմիում>> կտրոնային միավոր գինը 400.41-ից նվազեցնել 370 ՀՀ դրամ, իսկ 2-րդ չափաբաժով բենզին <<Ռեգուլյար>> կտրոնային միավոր գինը 345,81-ից նվազեցնել 340 ՀՀ դրամ և պայմանագրի 3.1 կետով սահմանված **2 108 887 501.20** (երկու միլիարդ հարյուր ութ միլիոն ութ հարյուր ութսունյոթ հազար հինգ հարյուր մեկ դրամ քսան լումա ) ՀՀ դրամը սահմանել **593 200 272** / հինգ հարյուր իննսուներեք միլիոն երկու հարյուր հազար երկու հարյուր յոթանասուներկու / ՀՀ դրամ, որի մատակարարումը կիրականացվի վաճառողի կողմից հավելված 1-ին համապատասխան, իսկ վճարումը Գնորդի կողմից կիրականացվի սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 2-ին համապատասխան: Գումարը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը: Մնացած ապրանքների վճարումը կիրականացվի ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով:

1.2 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

### 2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, աշխատանքի կատարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է (2) երկու էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

2.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ոստիկանությունը:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ ոստիկանություն | ՄԵԳԱ ԹՐԵՅԴ ՍՊԸ |
| ք. Երևան, Նալբանդյան 130 | ք. Երևան, Արտաշիսյան 110 |
| ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | ԱՐԴՇԻՆԲԱՆԿ ՓԲԸ |
| Հ/Հ 900011021947 | Հ/Հ 2470076924750000 |
| ՀՎՀՀ 01533334 | ՀՎՀՀ 00489503 |
| հեռ. 59-66-32 | հեռ. +374 91 69 00 10 |
| Էլ. Փոստ: policetv.gnumner@mail.ru | Էլ. Փոստ: Yura.megatrade@gmail.com |
| Ա.Հովհաննիսյան | Ս.Բաղդասարյան |
| / ՀՀ ՆԳՆ ոստիկանության պետ-ներքին գործերի նախարարի տեղակալ / (ստորագրություն) Կ.Տ | (ստորագրություն) |

Հավելված N 1
<<09>> 03 2023թ.
ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ԲԵՆԶԻՆ/2023/Հ-7-1
ծածկագրով գնման պայմանագրի թիվ 1 համաձայնագրի

## Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | չափման միավորը | միավոր գինը/ ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը*** |
| 1 | 09132100/503 | բենզին <<Պրեմիում>> կտրոն | լիտր | 370 | 83 200 272 | 224 865.6 | ք. Երևան Ծ. Իսակովի 7 | 224 865.6 | Համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո I եռամսյակում 224 865,6 լիտր |
| 2 | 09132200/510 | բենզին <<Ռեգուլյար>> կտրոնային | լիտր | 340 | 510 000 000 | 1 500 000 | ք. Երևան Ծ. Իսակովի 7 | 1 500 000 | Համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո I եռամսյակում 1 500 000 լիտր |

Հավելված N 2
<<09>> 03 2023թ.
ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ԲԵՆԶԻՆ/2023/Հ-7-1 ծածկագրով
գնման պայմանագրի թիվ 1 համաձայնագրի

## Վճարման ժամանակացույց

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում ՀՀ դրամ | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 09132100/503 | բենզին <<Պրեմիում>> կտրոն | - | 66 056 900 | 66 056 900 | 83 200 272 | 83 200 272 | 83 200 272 | 83 200 272 | 83 200 272 | 83 200 272 | 83 200 272 | 83 200 272 | 83 200 272 | **83 200 272** |
| 2 | 09132200/510 | բենզին <<Ռեգուլյար>> կտրոնային | - | 444 650 600 | 444 650 600 | 510 000 000 | 510 000 000 | 510 000 000 | 510 000 000 | 510 000 000 | 510 000 000 | 510 000 000 | 510 000 000 | 510 000 000 | **510 000 000** |

**Գ Ն Ո Ր Դ**
**ՀՀ ոստիկանություն**
**ք. Երևան, Նալբանդյան 130**
**ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն**
**Հ/Հ 900011021947**
**ՀՎՀՀ 01533334**
**հեռ. 59-66-32**
**Էլ. Փոստ: policetv.gnumner@mail.ru**

**Ա.Հովհաննիսյան**
/ ՀՀ ՆԳՆ ոստիկանության պետ-ներքին գործերի նախարարի տեղակալ/
(ստորագրություն)
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
**ՄԵԳԱ ԹՐԵՅԴ ՍՊԸ**
**ք. Երևան, Արտաշիսյան 110**
**ԱՐԴՇԻՆԲԱՆԿ ՓԲԸ**
**Հ/Հ 2470076924750000**
**ՀՎՀՀ 00489503**
**հեռ. +374 91 69 00 10**
**Էլ. Փոստ: Yura.megatrade@gmail.com**

**Ս.Բաղդասարյան**
(ստորագրություն)